ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2026թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերում» ծրագրով ձեռք բերված 76,000,000 (յոթանասունվեց միլիոն) ՀՀ. դրամ ընդհանուր արժեքով թվով 8 (ութ) հատ 3 տվիչով թվային ուլտրաձայնային համակարգերը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել Երևանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների հետ նվիրատվության պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին 2026 թվականին կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/25-1 պայմանագրով ձեռք են բերվել թվով 8 հատ 3 տվիչով ուլտրաձայնային հետազոտությունների համակարգեր 76,000,000 (յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որոնք արդեն իսկ տեղադրվել և փաստացի շահագործվում են Երևանի ենթակայության առողջապահական կենտրոններում: Ներկայումս 3 տվիչով ուլտրաձայնային հետազոտությունների համակարգերի փաստացի շահագործումը և պահպանումը իրականացվում է Երևանի «Արշակունյաց» առողջության կենտրոն, «Արաբկիր» առողջության կենտրոն, «Ավան» առողջության կենտրոն, «Դավթաշեն» առողջության կենտրոն, «Նոր-Նորք» առողջության կենտրոն, «Բաղրամյան» առողջության կենտրոն և «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունների կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«_____» _____ 2026թ.
h. _____ -Ա որոշման

ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐՎՈՂ (ՆՎԻՐՎՈՂ) ԳՈՒՅՔԻ

ՀՀ դրամ

<<	Բուժհիմնարկի անվանումը	Բժշկական սարքավորման անվանում	Քանակ	Միավորի գին	Ընդամենը գին
1	«Արաբկիր» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
2	«Արշակունյաց» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
3	«Ավան» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
4	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	2	9,500,000	19,000,000
5	«Դավթաշեն» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
6	«Բաղրամյան» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
7	«Նոր-Նորք» առողջության կենտրոն ՓԲԸ	Թվային ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 3 տվիչով	1	9,500,000	9,500,000
ԸՆԴԱՄԵՆԸ			**8**		**76,000,000**